

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ծր.

Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍԱՀԱՆԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 ծր.

Վեցամսեայ . . . 7 ծր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօյար

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Թանգարանի ողոր
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Կ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

Iravounk

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

ИЗДАНИЕ

ВАРНА

Կրտսերները եւս չեն
տրոշիր

ԽԻՆԴ ԵՒ ՏԱԳՆԱՊ

Մեր նախորդ թիւով հրա-
տարակուած Ձարին Ուրազը սպա-
սուածէն աւելին կը վերադարձ-
նէ Ռուսահայոց. եկեղեցական
կալուածոց վերլուծման հետ,
ուրիշ տարի առաջ գրաւուած
վարժարանները և ասոնց գոյ-
քերը ու կալուածներն ալ կը
վերադարձուին հայ ազգին :

Ուրազի առաջին մասին մէջ
նկատելի է թէ Ձարը այս նոր
կարգադրութիւնները հրամայած
է Կովկասի նոր փոխարքայ Վա-
րանցով—Տաշքովին թելադրու-
թեամբ և առաջարկութեամբ :
Ուրազին մէջ բացորոշ երեւցող
այս պարագան բոլորովին կը
լրէ Կովկասի դաշնակցական. Կո-
միտէներու ամբաստանութիւննե-
րը այդ բարձր պաշտօնէին
նկատմամբ : Փոխարքան դեռ
Կովկաս չը հասած անոնց յա-
նուն հայ ժողովուրդին անոր
դէմ հայհոյակից յայտարարու-
թիւններ ցրուած և լուտանք-
ներ տեղացուցած ըլլալը—կար-
ծես մարդը զօրով հայտնաց
ընելու դիտումով (*)—եւ յետոյ
անոր մեզ հանդէպ ունեցած
բարեացակամութիւնը՝ որ Ուրա-
զով կապացուցուի, երբ նկատի
առնենք, Վարանցով—Տաշքով
փոխարքային վեհանձնութիւնը
և դէպի Հայերը բարի տրամա-
դրութիւնը ամէն գովեստէ բար-
ձր կը գտնենք :

Արդ, այլևս հաստատուած լի-
նելով փոխարքային Հայոց հան-
դէպ բարեացակամ տրամադ-
րութիւններով օժտուած անձնա-
ւորութիւն մը լինելը, կը մնայ
հայ ժողովուրդին—յեղափոխա-
կան թէ ազատական կամ պահ-
պանողական—ազնուօրէն և յար-
գանքով վարուիլ իր հետ, քա-
նի որ Ձարին բարեհաճ Ուրա-
զին ինչ ինչ կէտերու գործադ-
ր-

(*) Տեսնել Իրաւունքի թիւ 44 ի
«Փոխարքան և Հայերը» խմբագ-
րականը :

րութիւնը և կարգադրութիւննե-
րու վերաքննութիւնը անոր կամ-
քին յանձնուած է :

Ռուսահայոց ազգային իրաւունք-
ներու վերստացման սա բերկ-
րաւիթ լուրը հազիւ քանի մը օր
մեր սրտերը հրճուանքով լե-
ցուց, ահա վրայ կը հասնի
թրքահայոց գլխուն դժբաղդու-
թեան նոր թուական մըն ալ
բացուելու սպառնալիք գուժը :

Սուլթանին դէմ կատարուած
սպանման փորձէն յետոյ՝ որ վեր-
ջապէս նպատակի մը կը ծա-
ռայէր և արդիւնք մը կը խոս-
տանար բոլոր թրքահայատակ
ցեղերու, Ձմիւռնիոյ մէջ հիւ-
պատոսարաններու եւ գրամա-
տուներու դէմ երևան ելաւ
դաւ մը՝ որ եթէ ստոյգ է թէ հայ
յեղափոխական մարմնոյ մը կողմէ
պատրաստուած է, առանց վարա-
նելու ամենայնիմար ձեռնարկ
մը պիտի անուանենք, ձեռնարկ
մը որ 96 ին Պանդ Օթօմանի
գրաւման փորձէն աւելի աղէտա-
բեր կրնար ըլլալ ոչ թէ միայն
Ձմիւռնիոյ այլ նաեւ շատ մը
հայաբնակ վայրերու համար,
քանի որ Սուլթանին էն կատ-
ղած օրերուն կը հանդիպէր :

Բարեկամ մը՝ որ 96 ի Պանդ
Օթօմանի դաւին շատագոյններէ
մին եղած է, երէկ տեսակցու-
թեան մը միջոցին ինձ կըսէր
թէ լաւ եղաւ որ Ձմիւռնիոյ
դաւադրութիւնը բռնուեցաւ, ո-
րովհետեւ եթէ այդ դաւը գոր-
ծադրուէր անտարակոյս ահագին
աղէտներու կամ ջարդերու պատ-
ճառ պիտի ըլլար, մինչդեռ հի-
մա բռնուելով հազիւ քանի մը
տասնեակ հայերու վտանգ կը
սպառնայ : Ըսել է անխելք ձեռ-
նարկի մը նուազագոյն չարիքն
է այսօրուան Ձմիւռնիոյ մէջ
տիրող ողբալի վիճակը : Բայց
լաւագոյն չէ՞ որ ինքզինք գոր-
ծի վրայ ցոյց տալու համար միայն
աղէտներ պատրաստող այդ յեղա-
փոխական կազմակերպութիւնը
նիւթապէս չը քաջալերուէր ժո-
ղովուրդէն : Թէեւ այդպիսիներ
երէկ իսահակ ժամահարեանց

մը, Պալեօղեան մը, այսօր Արիկ
Ունճեան մը և վաղը ուրիշ հայ
միլիոնատէրեր ու հարուստներ
սպաննելու սպառնալիքով նիւթա-
կան ուժ գոյացնեն : Բայց այդ
նիւթական ուժով ոչինչ չեն կարող
ընել երբ իրենց հետ ժողովուրդի
գոնէ մէկ փոքր մասին բարոյա-
կան քաջալերութիւնը եւ աջակ-
ցութիւնը չունենան, Հետեւաբար
այս օրինակ աղէտներու պատ-
ճառ եղող յեղափառականերու
թեան չափ պատասխանատու է
հայ ժողովուրդի այն միամիտ
մասը որ կոյր համակերպութիւն
մը ցոյց կուտայ և կը վարանի
դատապարտել երբ գործելակեր-
պի կրկնուած սխալները ու զեղ-
ծումներ ահնայտնի կը տեսնուին :

Ձմիւռնիոյ մէջ յայտնուած
դաւին և ասոր հետեւանքը եղող
սարսափներուն յաջորդեցին հայ
յեղափոխականներու կողմէ Տրա-
պիզոնի մէջ երկու եւ կեսարիոյ
մէջ մէկ մզկիթ օդը հանուելու
լուրեր և այդ տեղերը կոտորած-
ներ սկսելու գուժեր : Ըստ մեզ
չէ կարելի երեւակայել թէ գրո-
նուին Հայեր որ այդ տեսակ
բարբարոսական ձեռնարկի մը
հեղինակը ըլլան : ձեռնարկ մը
որ պարզապէս կրօնի դէմ յար-
ձակում մը կրնայ նկատուիլ և
որ ամբողջ իսլամ աշխարհին ո-
րուն հազիւ մէկ քսաներորդ-
մասը կը կազմէ թուրքը, վրէժ-
խնդրութիւնը կը հրաւիրէ հայ
ազգին վրայ : Ուրախալի է որ Կ.
Պօլսոյ դիւանագիտական շրջա-
նակներու մէջ ալ չը հաւատա-
ցուիր որ մզկիթներ օգը հանդ-
ներ հայեր ըլլան, այլ կը կար-
ծուի թէ երկրորդին կազմակեր-
պած մէկ նոր դաւն է այդ, զոր
հայկական ընդհանուր ջարդ մը
սկսելու պատրուակ պիտի գոր-
ծածէ : Փափաքելի է որ այս
կարծիքը հաստատութիւն գըտ-
նէր և պետութիւնները փութա-
յին կոտորածին առջև առնել :

Վեհ. ԿԱՌՈՂԻԿՈՍԻՆ ՀԵՌԱԳԻՐԸ

ՁԱՐԻՆ ՈՒՂՂՈՒՅԾ

Պետերբուրգ, Նորին Կայսերա-
կան Ս'եծութիւն Թագաւոր Կայս-
րին :

Քո թագաւորութեան հասած
մեծ փորձանքի ծանր տարում,
որ վշտով լցրեց Քո սիրտը,
Դու յիշեցիր Քո արքայական
գթութեան մէջ Քեզ հաւատա-
րիմ հայկական ազգը եւ վերա-
դարձրիր Քո վստահութեան հետ
միասին լայն լուսաւորական գոր-
ծունէութեան բոլոր միջոցնե-
րը : Մեծ է երախտագիտա-
կան ցնծութիւնը իմ ամ-
բողջ հօտի, թէ պետութեան սահ-
մաններում և թէ աշխարհի միւս
մասերում : Լցվում է խորին ըզ-
գացվածութեամբ եւ Քո ջերմե-
ռան ազօթարարի սիրտը, որ
ապրեց, մինչեւ կատարվեց իր
անչեղ հաւատը առ Քո արդա-
րագատութիւնը և Քո մարդա-
սէի իմաստութիւնը : Այսօր, ա-
ռաջին կիրակի օրը Քո կամքի
յայտարարութիւնից յետոյ, թիֆ-
լիզի մայր եկեղեցում, տեղական
ամբողջ հոգեւորականութեան
պաշտօնակատարութեամբ, ես ա-
զօթեցի իմ ամբողջ հօտի հետ
Քո, Արքայ, և Քո Օգոստոսիան
Ընտանիքի առողջութեան և եր-
կարակեցութեան համար :

Ձերմ է մեր ազօթքը : Թող Ա-
մենակալը ուղարկէ Քո սրտին
մխիթարութիւն և ուրախութիւն
արտաքին խաղաղութեան և ներ-
քին անդորրութեան շուտափոյթ
հաստատութեան համար, յեր-
ջանկութիւն Քո համայն ժողո-
վրդի :

Մկրտիչ Ա. Կարողիկոս
ամենայն Հայոց

ՁԱՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Թիֆլիս, Ամենայն Հայոց Կա-
թողիկոսին :

Անկեղծօրէն շնորհակալութիւն
եւ յայտնում Ձեր Սրբութեան
արտայայտուած զգացումների հա-



մար. Թող Տէրը իմաստացնէ հայկական հօտը արդարացնելու իմ նրան ցոյց տուած վստահութիւնը :

ՆԻԿՈԼԱՅ

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՀԵՌԱԳԻՐԸ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ

«Կիսովօղակ, — նորին Մեծութեան փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովին :

Վերառաքելով իմ հօտիս հետ միասին ջերմ աղօթքներ Մեծ Թագաւորը Կայսրի բարեկեցութեան համար, հայ եկեղեցուն և հայկական ազգին տուած շնորհի մասին, էս յայտնում եմ Ձերդ Պաշտաւաւայութեան խորին երախտագիտութիւնը Ձեր արդար միջնորդութեան համար և օրհնում եմ Ձեզ և Ձեր ընտանիքը, ցանկանալով Ձեզ ոյժ՝ իրագործելու Ձեր խնամքին յանձնած երկրի համար մշակած բարի ծրարագիծները :

Մկրտիչ Ա. Կարսիկոս
աւետանայ Հայոց

ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ՊԱՏԱՄԱՆԸ

Թիֆլիս.
Նորին Սրբութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին :

Արտայայտելով Ձերդ Սրբութեան իմ խորին երախտագիտութիւնը Ձեր բարի ցանկութիւններին առիթով ինձ և իմ ընտանեացւոյ, վստահանում եմ յայտնել, որ Կովկասի հայերը կը կարողանան իրանց հաւատարիմ հրապարակութեամբ ապացուցանել Թագաւոր Կայսրին, թէ որքան շնորհապարտ են չորին Մեծութեան իրանց ցոյց տուած Արքայական շնորհաց համար: Յանձնում եմ ինձ ձեր սուրբ աղօթքին :

Կոմս Վորոնցով-Դաշկով

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Մշակի օգոստ. 10 թիւին մէջ կը կարդանք հետեւեալները :

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը շարունակ շնորհաւորական հեռագիրներ է ստանում թէ Ռուսաստանի եւ թէ արտասահմանի հայաբնակ քաղաքներից, ազգային զանազան հաստատութիւններից պաշտօնական եւ մասնաւոր անձերից: Այդ հեռագիրները արտայայտում են անկեղծ ուրախութիւն որ հայկական ճգնաժամը Ռուսաստանում Կայսրի արգարադատ որոշմամբ լուծվեց ի նպաստ հայերի :

Երէկ, ամսին 9-ին Նորին Վեհափառութիւն ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն, ուղեկցութեամբ

Թիֆլիսի թեմակալ առաջնորդ Գաբրիէլ արքեպիսկոպոսի Նահապետ եպիսկոպոսի, Դիւանապետ Յուսիկ վարդապետի տաւօտեան ժամը 10-ին այցելեց Կովկասի Փոխարքայի քաղաքական մասն օգնական Սուլթան-Կրիմ Գրիգորին, որը սիրալիր ընդունելով ներկայացրեց իր ընտանիքը Նորին Վեհափառութեան օրհնութիւնն ստանալու: Տեսակցութիւնը տեւեց կէս ժամ: Վեհափառ Հայրապետի վերադարձից կէս ժամ յետոյ առաջնորդարան փոխ այցելութեան եկան Սուլթան Կրիմ-Գրիգորի ամուսինը իր օրիորդի հետ: Նորին Վեհափառութիւնը Սուլթան Կրիմ Գրիգորին տանը թէյի ժամանակ նուէր ընդունեց նրա օրիորդից մի գեղեցիկ բարձի երես՝ ձեռագործ՝ նոյն օրիորդի, իսկ նրանց փոխայցելութեան ժամանակ նուէր տուեց իր պատկերը իր մականորթին:

Դպրոցական յանձնաժողովը, որ գործում էր Նահապետ եպիսկոպոսի նահապետութեամբ, ինչպէս տեղեկացնում են մեզ հաստատ աղբիւրից, ծրագրել է արդէն բացվելիք հայ եկեղեցական ծխական դպրոցների ապագայ կանոնադրութեան էական կէտերը: Գայով ուսումնական ծրագրին, յանձնաժողովը որոշել է գումարել մի ժողով—հմուտ մանկավարժներին եւ ուսուցիչներին— եւ նրան յանձնել այդ ծրագրի մշակումը:

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը այսօր, օգոստոսի 10-ին ճաշից յետոյ ժամը 4-ի գնացելով կը մեկնի դէպի Էջմիածին:

Երգուհի հաւատարմատար Լ. Խոմենտովսկին, որ մայիսի 28-ին գահը վում էր Նախիջևանում եւ քննուած էր աղետին վերաբերվող գործերը, ինչպէս եւ երգուհալ հաւատարմատար Արշակ Առաքելեան եւ երգուհալ հաւատարմատար օգնական Լեւոն Շահբուզադեան, որոնք յուլիսի 12-ին գնացել էին Նախիջևան օգնելու Խոմենտովսկուհու, աղետից մնացած ժողովրդին իրաւագիտական օգնութեամբ: Հայթայթեալ, երկու օր առաջ վերադարձաւ Թիֆլիս: Վերադարձաւ նրանց հետ եւ ուսաղ ու մեր լրագրի թղթակից ուս երիտասարդ հրապարակախօս Սենակիվիչը: Փաստարանները հաւաքել են 8 հատոր նիւթեր—վկաների ցուցմունքներ մօտ 450 հոգու—որոնք ապացուցանում են տեղական խանութի եւ ուրիշների մեղսակցութիւնը եւ զեկավարութիւնը թուրքական յարձակումների:

Ղամարյուրից ստացանք հետեւեալ հեռագիրը օգոստոսի 9-ին. «Օգոստոսի 5 ի ցերեկվայ ժամը 4-ին Ջուլֆայի երկաթուղու գծերի մօտով անցնող քարտայները—Արզուման Բարայեան, Բախչի Ալլահիբեկեան, Իլիան Ջաւատեան, —Շիրակի կիսակայանից ոչ հեռու, թուրքական Կարալակ գիւղի մօտերը անհետ կորան: Առայժմ ոստիկանական հսկողութիւններն ի գուր են անցել »:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. « Սէյիդի չէնից Առաջածոր դնացող հինգ հայի վրա «Յեւ-Ձոր» ճանապարհին դարան

մտած 12 քօլանի թուրքեր ու քըրդեր յարձակվում են եւ երեքին կոտորում, իսկ երկուքը փախչում են: Արիդուն Սարուխանեանի եւ որդու դիակները մաս-մաս յօշոտել են» . . .

ՌՈՒՍԻՈՅ ՏՈՒՄԱՆ

(Ազգային ժողովը)

Սրբաւարտ Անգլ. մեծ թերթը. Ռուս Ազգ. ժողովը հաստատող օգոստոսի 6 ի Ուրաղին առթիւ հրատարակած է հետեւեալ խմբագրականը. «Որ շատ ուրիշ թերթերու մէջ եղած քննադատութիւններէն տարբեր թօն մը ունենալուն համար, կարծէ ուշադրութեան առարկայ ընել:

Ձարին ուրաթ օր հրատարակած Ռուսական Սահմանադրութիւնը հրաժարուած ընդունուած է: Անտարակոյս խոստացուած ժողովրդային պատուութեան յետաձգելը պակասեցնում է կայսերական պարզեւէն դարձ գոհունակութիւնը: Ինչ որ վեց ամիս առաջ պիտի ընդունուէր իբր վեհաձն գիշորութիւն մը, հիմայ կրնաւուի իբր յապաղեալ եւ խեղճ հատուցում մը օրը անցած պարտքի մը. չենք ալ դարմանար որ Օտեսայի եւ Մոսկուայի նման ճարտարագործական կեդրոններու մէջ քննադատութիւնը գրեթէ արհամարող թօն մը ունի, քանի որ այդ յառաջդիմական բայց անհաստատ հասարակութեանց մէջ շատ յառաջդիմ տեսութիւններ կան եւ կողմն իշխալ կատարեալ անփորձութեամբ ինքնավարութեան մէջ:

Շատ քննական է որ Լեհերը որ դուրս ձգուած են, եւ Հերաները որ ուղղակի երեսփոխան մը ունենալու առիթ գտած չեն, կատարողներ պարտւողներու խումբը: Բայց պէտք է յիշուի որ ներկայ վայրկեան Լեհաստան հարկը քողարկուած յիշափոխական իրձակի մը մէջ կը գտնուի, եւ հրեաներուն համար ալ Ռուսիոյ մէջ քաղաքացիի գործնական իրաւունքներէն դուրս չը ձգուիլը նշանակելի յառաջդիմութիւն մը կը ցուցնէ քաղաքական լուսաւորութեան մէջ: Թէեւ Ձարը կրնայ հակած ըլլալ անգամ մը մէկ նախարարի խորհուրդներուն, եւ անգամ մը միւս նախարարին, թէեւ կրնայ երբեմն ինկած ըլլալ մեծ դուքսերու ազդեցութեան տակ, թէեւ նա կրնայ մինչեւ իսկ շարլաթաններ եւ արկածախնդիրներ ընդունած ըլլալ իր գաղտնի ժողովին մէջ, սակայն նա երբեք վարանած չէ իր տկունածանքին մէջ դէպի Ս. Սինոդի մեծ գործակատարը: Պ. Բոպիէտոնօսֆին սուր վիշտ պատճառած ըլլալու է իր Լուսնութիւնն տալ ստիպուած ըլլալը սահմանադրութեան մը որ բնաւ հաշուի չի առնել կրօնական հաւատը: Այս նկատմամբ եթէ ոչ ուրիշ բանի, մենք կը շնորհաւորենք կայսրը դէպի ազատամտութիւն իր ըրած քաջ մերձեցումին համար: Մենք կրնանք մէկ կողմ գնել օտար Արմատականներու եւ Ընկերավարականներու քննադատութիւնները: Հաւասարութեան եւ եղբայրութեան ազատ տեսութիւնները կրնան յարմարեալ ըլլալ թէ շատ ապահովութեամբ, անանկ ցեղերու որոնք իրենց քաղաքական փրկութեան հա-

տած են ուշիմ կողմի եւ կրթութեան դարերու միջոցաւ: Ռուսիոյ անուս գիւղացին միշտ անարգել Ռուսկայեռքեան մը աղմուկին մէջ, խելացի փորձ մը չի: Ասիկա անբուժելի փորձն է:

Թուէի իրաւունքի մէջ եղած սահմանափակումները, զգուշութեան կողմէն կրնան թէեւ սխալած ըլլալ բայց կարեւորը հոս է որ երեսփոխանական սկզբունքը գործնականապէս ընդունուած է: Դիւրին պիտի ըլլայ լայնցնել Տոմայի իրաւունքները: Ասիկայ այն պարագաներէն մէկն է որ կեարտւալ խողովակն աղիկ է: Եթէ մէկէն իրապէս ազատ երեսփոխանական ծրագրի շնորհուած ըլլար եւ եթէ ատոր արդիւնքը աղետը ըլլար, այն ատեն միակ դարմանը կը կարծուի թէ պիտի կայանար յետադիմութեան մէջ: «Ռուսկայեռքեանութիւնը, կրէ Թօքվիլ գերեզմանի կը նմանի: Այն կառնէ բայց երբէք չի տար»: Ասիկայ կըրնայ ջնջուիլ ուժով, զինուորական ուժով միայն: Եթէ Ձարը տեղի տուած ըլլար զգայական թելադրութեանց եւ կոմս Թոմայի սկզբունքները մարմնացնէր գործող կառավարութեան մը մէջ, անիկայ անդառնալի քայլ տուած պիտի ըլլար, որուն արդիւնքը կրնար ըլլալ ոչ թէ միայն գահին անկումը այլ նաեւ կայսրութեան խորտակումը: Ուստաց մէջ չափաւոր ազատականութեան ակաւջ տուող չկայ: Մենք չենք ըսել թէ բարենորոգիչները երազողներ են, բայց անոնք Ամերիկայի եւ Անգլիոյ մէջ ճանչցուած որ եւ խուսիք մը տեսութիւններէն ալ անդին կերթան: Կը կարծենք որ պէտք է դռնէ տեսականօրէն պահել ինքնակալութիւնը եւ մենք չենք ալ կրնար գանգատիլ որ պատգամաւորներու պաշտօնը զսպում է մեծ ատիճանաւ արուեստագիտական արգելքներով եւ վէթներով: Անոնք սակայն կրնան գործող կամ ի քուն նկատուիլ: Տոմայի վարդապետ կերպին համեմատ: Մենք կենթադրենք թէ Ձարը եւ նախարարները ճշմարտապէս նպատակ ունին այս նոր ծրարագիրը փորձելու եւ թէ իրենց նպատակն է կամաց կամաց ժողովուրդը եւ ընտրողները վարձեցնել ինքնավարութեան: Եթէ անոնք որեւէ ուրիշ նպատակ ունին յանցաւոր եւ մեծապէս: Առանձնաշնորհաւորութեան ամենէն վարպետ գործածութիւնն ալ չի կրնար վերջի վերջոյ անդի չը տալ երեսփոխանական ժողովի մը որչափ ալ անկատար ըլլայ այն եւ ազատ վիճարանութեան գործունէութեան առջեւ: Թող անոնք ի նկատի առնեն թէ աւելի համեստ սկիզբն ունեցաւ: Անգղիոյ երեսփոխանական ժողովը եւ իւր ազդեցութիւնը մեծցուց ազգին ճակատագրին վրայ: Որչափ տգէտ եւ անուս ըլլան Ռուսիոյ դիւղացիները եւ անոր գործաւորներու մէկ մեծ մասը, զարգացած միջին դասակարգը շատ կը հետաքրքրուի քաղաքականութեամբ եւ չի պիտի դիւրութեամբ արգիլուի իր նոր ստացած իրաւունքները գործածել: Կայսեր իշխանութիւնը կրնայ չնուազել սակայն մենք կը հաւատանք որ դիւանականութեան (պիւռօքսոթի) թելերը պիտի կտրուին:

Կ'ըսուի թէ նաեւ ժողովուրդի մէկ մեծ մասը շուրս ձգուած է քուէի իրաւունքէն: Բայց 75 տարի ետ նախքէ, ինչ էր այն ատեն ժողովուրդ-

դին եւ ընտրողներու մէջ եղած հա-
մեմատութիւնը Անգղիոյ մէջ : Միայն
քսան տարի է որ Անգղիոյ հողագործ
աշխատաւորին քուէի իրաւունք մը
տրուած է : Կարեւոր կէտը այն է
որ Ռուսիոյ մէջ ինքնավարութեան
նախափորձը կըլլայ : Շատ կարե-
ւոր է որ Տուժայի մեծամասնութիւնը
մինչեւ իսկ մօտաւորապէս ալ չի
ներկայացնէ ժողովուրդի ամբողջու-
թիւնը : Ասիկայ խնդիրը իր յոռե-
գոյն վիճակին մէջ տեսնել է , բայց
մինչեւ իսկ գաղափարներ չի ընել
ժողովրդ : Մենք աւելի քիչ կարե-
ւորութիւն կուտանք անոր օրէնք
չինելու վերաբերեալ իշխանութեան,
քան անոր այն իրաւունքներուն որ
չնորհուած են, այն է բացառութիւն
պահանջել նախարարներէն եւ գըլ-
խաւոր պաշտօնատարներէն : Թէեւ
նա չի կրնար անոնց ճամբայ տալ,
այդ երկրորդական նկատում մ'է :
Տեսականապէս, նոյն բանը չի կրնար
ընել անգղ. երեսփ. ժողովը ալ եւ
գործնականապէս միացեալ նախագահ
քօնկրէսը : Տուժայի կառավարութեան
վրայ ունեցած ազդեցութիւնը , իր
ազդեցութիւնը արգիլելու յոռի կա-
ռավարութիւն—այն է որ անիկայ ի-
րաւունք պիտի ունենայ իր բոլոր-
ները Զարին ուշադրութեանը յանձ-
նելու : Եթէ մինչեւ իսկ որ եւ է
պատճառով գաղտնի նիստի մէջ
վիճաբանութիւն ըլլայ, գործառնու-
թիւնները պիտի հաղորդուին բարձրա-
գոյն իշխանութեան, մինչեւ հիմայ
կարելի եղած է նախարարի մը հա-
մար անտեսել հանրային կարծիքը
եթէ նա կամենայ աչքը առնել այն
կոմանդը թէ կրնայ ըլլալ որ ըրածը
կը յայտնուի իր կայսերական տի-
րոյ : Շատ անգամներ ճնշողը կամ
կեղծողը անպատիժ կը պրծի 'եթէ
նա ուզէ իր անկարգութեան գործա-
կարներուն եւ երբեմն ալ իր ան-
պատիժօրէն խուզարկու գերազանե-
րուն վճարել գումար մը իր յետ-
գահի հարկս (կաշառք)

Այս ամբողջ սխառմը մէջտեղէն
կը վերցուի հիմայ որ հանրային
կարծիքին իշխանութեան ձայն կը
որուել : Պէտք չէ կարծուի թէ աչիմ
ինքնավարութիւն մը պիտի աշտես
ժողովուրդին պատգամաւորներուն
տեսութիւնը եւ բողոքները : Ամէն
անգամ որ ինքնակալութիւնը միջա-
մտէ ճնշողին եւ ճնշալին միջեւ
իւր իշխանութիւնը կը հաստատ-
ուի եւ կամրանայ : Պէտք չէ ե-
րեւակայել թէ Զարութիւնը կը
սիրէ զիւրանակալութիւնը : Միակ
գործնական արգելքը կայսեր բաց-
արձակ ուժին այս եղած է որ ամէն
անգամ որ նա ուզած է իր նախա-
ձեռնութեան իրաւունքը գործածել
անիկա ոտնկապ եղած է պաշտօնա-
կալութիւնէն, որուն նա ոչ կրնար իշ-
խել եւ ոչ ալ ազատ ձգել : Նոր րէ-
փմի տակ եթէ գահը ուշիմ ըլլայ
եւ ժողովը չափաւր , մեծ պաշտօն-
եաները որոնք մինչեւ հիմայ գործ-
նականապէս անպատասխանատու էին,
իշխանութեան տակ պիտի առնուին :
Ասիկայ եթէ իրականանայ աւելի
մեծ բարեկարգութիւն մը պիտի ըլ-
լայ քան թէ ուրիշ որեւէ բան որ
յեղափոխական կուտակցութիւնները
խոստացած են :

Թարգմ. Անգլ.

8.

ԵՆՄԷՆԻ ԱՊՍՏՈՒԲՈՒԹԻՒՆԸ

Ենմէնի ապստամբութիւնը, որուն
սկզբի յաղթութիւնները վերջնական
յաջողութիւն մը կանխատեսել կուտա-
յին , վերջերս շատ պարտութիւններ
կրեց եւ թրքական երեք բանակներ
յառաջացան մինչեւ Սանաա. զոր
հաւանաբար այս միջոցիս պարպած
են Մահմետ Եահիայի պէտէվի զին-
ուորները : Պէտք է ընդունել թէ պա-
տերազմական նախարարը , իր սովո-
րութեան հակառակ, այս անգամ
գործեց այնպիսի կորովով ու կազ-
մակերպական ոգով, որուն նմանը
տեսնուած չէր : Լաւ կըլլայ ըսել նա-
եւ թէ Սուլթանը իր կայսրութեան
հետաւոր մէկ կէտին վրայ ապստամ-
բութիւն մը զսպելու այսքան կարե-
ւորութիւն ընծայած չէր երբեք .
զի այս անգամ կը տեսնէր թէ Կոր-
սընցներու վրայ է ոչ թէ կտոր մը
հող , այլ աւելի ծանրակշիռ բան
մը—Պալիֆոնիսթեան՝ հաւատացեալ-
ներու հրամանատարի անտիճանը ,
որուն կորուստը իր կարծիքով, գո-
լոր պատհանած չարիքներուն ամենէն
յոռին պիտի ըլլար : Ահա ինչու հա-
մար պատերազմի սկզբէն Պալիֆոնի
բանակներուն տեղը գրուեցան թուրք
զինուորներու լաւագոյնները Ալպան-
իոյ . Մակեդոնիոյ եւ թրքական հին
նահանգներու պահեստները, որոնց
հրամանատարները Ֆէյզի փաշայի եւ
Շաքիր փաշայի պէս փորձառու
պետեր են :

Օգոստոս 5-ին մարաշիտ Ֆէյզի
փաշան բազմաթիւ վաշտերով առ-
տուն կանուխ կը մեկնի Մէնահա-
յէն , ուր տաքերը սկսեցին ի վեր
հաստատած էր իր բանակը, եւ կը
գրաւէ Պէրտի—Զահետ, որ յառաջաց-
եալ կայսրի մ'էր Մահմետ Եահիայի
անդակալներէն միոյն ձեռքը : Մա-
րաշիտի գործերուն յեղակարծ յար-
ձակումը անկարողութիւն զարհուրանք
մը ձգեց ապստամբներու ճամբա-
րին մէջ, եւ որովհետեւ ասոնք հիւ-
սիսէն երեք յարձակում միանգա-
մայն կրած էին . չուտով փախչել
սկսան գնդակներու տարափի մը տակ ,
զոր կարծակէին թրքական զօրքերը
գրեթէ շատ մօտէն :

Նահանջը հարաւի կողմէն բուա-
կան բարձր սարերով կտրուած ըլ-
լալով, խորախուխ հողան շատ նեղ
կիրճի մը մէջ որ կը գտնուի կը-
ռնքիի նմանող գետի մը խորը ,
թուրք զօրքերուն թափած կրակ
ներէն անոնցմէ շատ շատեր տեղին ի
տեղը տապաւոտ գետին փռուեցան :

Թափող առաւօտուն , 6. Օգոստոս,
Ֆէյզի փաշան վերսկսաւ իր յառաջ-
խաղացութիւնը Սանաայի ճամբէն.
զօրքերը նախընթաց օրուան յաջո-
ղութիւնէն յափշտակուած , հակառակ
հեղձուցիչ տաքի մը, եռանդով թշնա-
մին վրայ կը քայլէին : Պէյթ էլ-
նէճիս գետը հասնելով, լուրջ դի-
մադրութեան մը բաղիւնեցան : Այս
դիրքը զոր ամրացուցած էր Մահմետ
Եահիա, երկու ժամ տեւող սուլիսաւոր
կռուէ մը ետքը առնուելով, Սա-
նաայի դժուարամուտ գիլիսուրը ճամ-
բաներէն մին բաց կը թողուր ինչ-
նամին առջեւ : Ֆէյզի փաշան իր ա-
ռաւելութիւններէն օգուտ քաղելու
փափաքով , հալածեց թշնամին եւ
հեծելազօրքով հասաւ մինչեւ Պէյ-
թի ձեռքի գետը , որ կարեւոր գերք
մէ Սանաայի ճամբուն վրայ եւ
զոր կը պաշտպանէր Մահմետ Եահ-
իայի առաջին տեղակալը թուրք

զօրապետը կը սպասէր որ իր գրա-
ւած ամէն տեղերէն աւելի հոն
լուրջ դիմադրութեան մը հանդիպի :
Ամսոյս 9-ին առտուն ժամը 8-ին
մարաշիտի զօրքերը ի հանդէս
լան թշնամին դէմ : Թարձակող հա-
կաւոր կը տարածուէր հինգ քիւ-
մէթրի մօտ գծի մը վրայ : Ապս-
տամբները, հողապատնէշներով եւ խո-
րունկ փոսերով պաշտպանուած, զը-
ժախտին կրակ մը թափեցին թրքա-
կան զօրքերուն վրայ , որոնք ա-
ռանց փամփոշտ մը ալքելու կը
յառաջանային ոտուռներով, եւ ապա-
տան կը փնտռէին հրկրի անհար-
թութեանց մէջ, բայց քիչ քիչ
շահելով թշնամին գերքերը, վեր-
ջին յարձակումը գրաւեցին բոլորը :
Այս կռուին մէջ , որ չորս ժամ
տեւեց եւ արիւնահեղ պատերազմ-
ներէն մին եղաւ, ուր երկու
կողմէն արիւթիւն ցոյց տրուեցաւ,
Մահմետ Եահիայի ապստամբները վի-
րաւոր թէ մեռած , չուրջ 12 հազար
մարդ կորսնցուցին, որոնք մէջէն
վերցուցին, հեղակաւոր Մահմետ—
էլէզէֆ. որ արար ժողովներէն ալ
բազուկը կը համարուէր : Այս Պէյթ-
էլ—ձեռքի յաղթութեամբ թրքական
զօրքերը Սանաայէն միայն մի քա-
նի քիւմէթր հեռու կը մնան. ուստի
այժմէն իսկ կարելի է սպասել որ
ընդհուպ գրաւուի Ենմէնի մայրաքա-
ղաքը :

Անգլիացի հարիւրապետը Գարփի
որ թրքական զօրքերուն հետ կը
գտնուի , եւ որուն կը պարտինք վե-
րոյիշեալ մանրամասնութիւնները,
թուրքերու ձեռք բերած առաւելու-
թիւնները կը վերագրէ նախ վերջերս
զրկուած թրքական զօրքերուն բա-
ցառիկ որակին , յետոյ անոնց ղէն-
քերու գերազանցութեան : Ասկէ գա-
լաւ վկայութիւն կուտայ նաեւ
արարներու անժախելի քաջութեանը
մասին, որոնք թէեւ լաւ հրամա-
նատար եւ լաւ ղէնքեր չունին ,
բայց կրցան այնքան երկար դիմա-
դրութիւն մը ցուցնել , Դժբաղդա-
բար , երբ մեծ տաքերուն մեղմ
բարիխառնութիւն մը յաջորդէ , յաղ-
թականին գործողութիւնները կրնան
աւելի կորովի կերպով սուսջ տար-
ուիլ : Առ այժմ Մահմետ Եահիա
պէտք է հրաժարի Մէքքէի վրայ
քալելու իր բոլոր կամէութեանէն. եւ
եթէ ստիպուեցաւ պարպել Սանաան,
այլ եւս իրեն կը մնայ Հիւսիսի լեռ-
նոտ երկիրները քաշուիլ, հոն իր
ապստամկային կռիւր շարունակելու
համար :

ԱՆՐԻ ՐԸՆՈՒ

ԱԶԳԱՅԻՆ

Կովկասի մէջ որ հայ օրաթերթ
միայն Մշակը մնացած էր, այսօ-
րեր պիտի ունենանք մէկէ ա-
ւելի նոր թերթեր : Բանքեր
հանդէսը մեծածաւալ օրաթերթի
մը պիտի վերածուի : Նոր—Դարը՝
որ իր արտօնատէր—խմբագրին
աքսորումովը դադրած էր, յա-
ռաշիկայ ամսոյ մէջ պիտի վե-
րսկիսի հրատարակուիլ աւելի մեծ
ծաւալով : Մշակ ևս իր ծաւալը
պիտի մեծցնէ : Կը հաւատուի թէ
ուրիշ հայ օրաթերթեր ալ պի-
տի հրատարակուիլ Պագուի և Տըփ-
լիսի մէջ :

—Սիւլիստրէի Թաղ. Խորհուրդը
Վեհ. Կաթողիկոսին հեռագիր մը
ուղղելով խնդակցութիւն յայտ-
նած է կովկասի եկեղեցական ու
գաղութական խնդրոց նպաստա-
ւոր կարգադրութեանը առթիւ :

—Վառնայի Թաղ. Խորհուրդը
չափազանց տնտեսագիտութենէ
մղուած, 10—12 ֆր. հեռագրի
ծախք չընելու համար, յարմար
գատած է նամակաւ մը իր խըն-
դակցութիւնը յայտնել Վեհ. Կա-
թողիկոսին և հայցել Ն. Ս. Օծու-
թեան օրհնութիւնը :

—Զմիւռնիայէ, Տրտպիզոնէ և
ուրիշ մէկ քանի գաւառներէ
Պատրիարքարան հասնող Թա-
խանձանքներէ մղուած՝ Պատրի-
արքը այս շաբթու 2-3 անգամ
պալատ դնաց և Սուլթանին
պաշտպանութիւնը խնդրեց այդ-
գաւառներու հայերուն սպառ-
նացող կոտորածին դէմ :

—Սօֆիայի մէջ ընթերցարան
մը բանալու համար ասկէ մէկու-
կէս տարի առաջ հաւաքուած 300
ֆր. չափ գումարը կը հարցուի
թէ, ու՞ր մնաց և ինչու չը շա-
րունակուի յայդ նպատակաւ կազ-
մուած ընկերութիւնը :

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Բաղէշի Խուրթիկ գիւղացի Թակոբ
Մ. Էրօեան (Ումուռ մականունանալ)
35-37 տարեկան կարճահասակ դեղնա-
գոյն եւ կապուտահայ անձը Պանգ
Օթօմանի դէպքին ուսու դեռպանաւոր
պաշտօնէի մը հետ Պոլսէն կրէտէ մեկ-
նած եւ յետոյ հոնկէ Բեդերսպուրկ
երթալով , բոլորովին դադրեցուցած
է իր յարաբերութիւնը իր ընտանի-
քին ու ազգականներուն հետ ,
իմացուած է թէ Ռուսախա անցած
է վերջերս : Ուստի կը խնդրուի իր
հասցէն գիտցողներէ որ հաճին երկտո-
ղով մը իմացնել խմբագրութեանս :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Վարչութիւնս իր Ժող. Նիստին մէջ
որոշեց նախամաւ դիմել Զեզ եւ
խնդրել միայնգամայն որ հաճիք Զեզ
հանրօգուտ թերթի միջոցաւ՝ յայտ-
նել մեր խորին շնորհակալութիւնները
ամէն այն ազգայիններու՝ որոնք Ըն-
թերցարանիս բացումէն մինչեւ այսօր՝
հաճեցան իրենց նուէրներով ստուա-
րել ընթերցարանիս յառաջդիմական
գործին :

Փափաքող ենք, որպէսզի հետզհե-
տէ աւելնան այսօրինակ ազգասէր-
ներու թիւը մեր սէջ :

Որով կը սիրեմք յուսալ թէ, չէք
մերժեր ընթերցարանիս կողմէ ու-
ղարկուած այս շնորհակալութեան
երկտողիկը հրատարակել Զեզ թեր-
թին մէջ, որուն համար կուգամք կան-
խաւ յայտնել մեր շնորհակալիքը .

Պորին Թարգանօք
Վարչութիւն Հայուհեաց «Ծաղէ» Ըն-
թերցարանին Շուքրայի
Փոխ Ատենապետուհի Գարսուդար
Ի. Գ. Աւագեան Ի. Թազուրիան
(Կնիք)

11 օգոստ 1905
Շուքր

ԳԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԳԻԱ

Սթանպոլ 16 օգոստոս

Գաղտնիքի պիտի ճամբից փախչի թե՛ թե՛ օրնան անարդիւթ միւսմէլէսինի Պապը Ալի թանտիգ իտէյօր: Պու վուգուաթ սահիհ տիր [կէօեա] էրմէնիէրտէն աշըւան լաղըմ վասիթասը իլէ: Օլէսնտէ ճափի իսլամլարլէ տօլու ըմըշ: Եագըն 100 քիշի էօլիլ վէ եարէլիէր վար տրր: Պուքին իւզէրինէ ինթիգամ ախաղը իշիւն թիւրքլէր պիւա իսթիսնա խրիսթիանլար իւզէրինէ հիւճոււմ իտուպ: 800 քիշիտէն զիյատէ գաթլ իթմիշլէր տիր: Բէվայթէ կէօրէ, թէքրար էրմէնիէր Աթիօն Գարահիսաւընտա իքի ճամբիէր հաւայա թիգրմըշ օլտըզլարը սէպէպլէ գըրկըն վուգու պուլմուշ:

Սթանպոլտա ֆէվզէլատէ էնտիշէ հուսուլա կէլմիշ տիր: Աւսաթիւա էլիքինի ճոււսա նամաղընտան սօնրա Սուլթան իլէ կէօրիւշմէնտէ պիր գաշ քէլիմէ իլէ թէհլիքէյի անա պէյան իտէրէք, էճնէպի թապաւար աախի զարարտիտէ օլապիլէճէքլէրինտէն մէսուլիլթ տողրու աան տողրու Սուլթանա համլ օլընաճաղըն իթթար իթմիշ տիր:

—Սուլթանը էօլտիւրմէք գասթընտա կէօեա չէրիքի ճիւրմատտ օլընան պիր գաշ էրմէնիլէրին Պուկարիատա պուլընտըզլարընը թիւրք հիւքիւմէթի տուլմուշ օլարագ, անլէրին թէսլիմինի Պուկարիատան թալէպ իթմիշ, ֆագաթ պէյնէտտիւվէլ գանուըն ահքեամընճա բօլիթիգա միւթթէհիմլէրի թէսլիմ իտիլմէզ օլտըզընտան Պուկարիա Պապը Ալիլէ ճէվապը բէտտ վէրմիշ օլտըզը Սօֆիա տան պիւտիւրիլիօր:

—Եէմէնտէն միւշիւր ֆէյլի բաշանըն սօն թէլէկրաֆը իւզըքէ, Մահմուտ Եահանըն աքէրլէրի ճէպէլի—Շայպ նամ տաղտան կէրի սիւրիւլմիշլէր: Պիր ինկիլիզ տիւրօմաթ տէմիշ տիր, «Ֆէյլի բաշանըն սօն ֆիթուաթլարը էհէմմիլթիսիլ տիրլէր զիւրա Մահմուտ Եահանըն պէօյիւք գուվլէթի Սանաատա պուլլընըօր»:

—Եուսն գըրալընըն մախտոււմ Բրէնս Նիքօլա տիւն ըսթանպոլա կէլուպ ագչամա կիտէճէք օլտըզը թէլէկրաֆ պիւտիրմիշ տիր:

—Մաքէթոնիատա Բոււմ չէթալարըն վէ թիւրք աքէրլէրին Պուկարիարա գարշը զատտարըզլար իճիա իթտիքլէրինի պուկար կաղէթալարը հէր կիւն եագմագտա տըրլար:

ԿԻՐԻՏ

Կիրիտին Ատղիվօրուլօս գասապաօընա եագըն աքըլար վէ Բոււս աքէրլէրի պէյնիտէ պիր միւտարէպէ վուգու պուլմուշ վէ Բոււսլարըն թէլէֆիաթը չօգ օլմուշ տըր: Բոււսլար Կիրիտ ժանտարմալարը պէրապէր օլաւագ 700 քիշի ըմըշլար: Ասըլար իսէ եալընը 220 քիշի իմիշ: Բոււսլարտան 15 էօլիւ 58 եարէլի տիւշմիւշ: ասըլարտան եալընը 8 քիշի էօլիւ: Ասըլար 14000 բաթրօն աթտըգտան սօնրա՝ ճէպհանէ գալմատըղը սէպէպլէ կէրի չէքիւմիշլէր:

Իշպու վագաա իւզէրինէ Աթիւնտա վիւքէլա մէճիսի թէճէմմիւ օլընարագ, էվրօբա տէվլէթլէրինէ նօթալար կէօնտէրմիշ տիր: պու նօթա իլէ Եուսն հիւքիւմէթի աատյը թէսքիւն իշիւն Բոււմ աքէրլէր տալի էվրօբա աքէրլէրի իլէ պուլընմագ լաղըմ տէմիշ տիր: Եուսն հիւքիւմէթիինի իշպու թէքլիքինէ իթալիա վէ Թրանսալարաղի օլմուշլար:

Աթիւնտան Պանթօրուլօ թէսթրօսընտա հէր կիւն Բուսիայա գարշը նիւմալիշլէր վուգու պուլմագտա տըր:

ՌՈՒՈ ՃԱՌՈՆ

ՄԻԻՈԱԼԷՀԱՈԸ

Բօրթամուլթտան օգոստոս 17 թարիխի ալընան թէլէկրաֆա նագարէն իքի մուհարիպ տէվլէթլէրին մուրախասլարը պէյնիտէ միւսալէհա չարթլարը իշիւն իթթիֆագ հասըլ օլմուշ տըր:

Ճաթօն մուրախասը Մ. Գոմուրա թօքիօտան եէնի թալիմաթլար ալարագ՝ սօն մէճիսի պէքլէմէքիլին Մ. Վիթէ իլէ կէօրիւշմէք իսթէմիշ պու իսէ ճաթօնըն խաֆիֆլէնմիշ օլան եէնի թէքլիքլէրինի իշիլմէքիլին՝ «Բուսիա ճաթօնըն պաշլըճա տէօրթ չարթլարը գաթիէն բէտտ իտէյօր», տէմէսի իւզէրինէ, Մ. Գոմուրա ճէվապէն, «Թօքիօտան ալտըղըմ եէնի թալիմաթ իւզէթ թաղիինաթը հարպիլէտէն, վէ էճնէպի իմպիւլարա սըղընմըշ րուս հարպ վաթօրլարըն պիլգէ թէսլիմինտէն, վէ Ասիայի չարգտէ Բուս գուվլէթիինի հուսուտ ալթընա ալընմասը թալէպիլտէն վաղ կէշիօրըզ, ֆագաթ Սախալին աատսընըն ճէնուպի գըսմը քաթիէն ճաթօնա գալմագ իւզըքէ, չիւմալի ճիհէթիինի պիր մէպլաղա մուգապիլ Բուսիայա իտէ օլընմասընա ըաղի օլիյօրըզ կիպի պէյանաթտա պուլընմասընտա, Մ. Վիթէ տէրհալ իթթիֆագա մէյլ կէօթէրմիշ վէ պու սու-

րէթտէ միւսալէհա մէսէլէսի թէմամէն հալլ օլընմըշ ըմըշ:

Տիկէր թարաֆտան ճաթօնիատա եէսիր պուլընան 80000 րուս աքէրլէրի իշիւն 100 միլիոն րուպլի պիր մէպլաղ Բուսիա ճաթօնա էտէյէճէք տիր:

Իքի տէվլէթ մուրախասլարը պէյնիտէ միւսալէհա չարթլարը իշիւն իթթիլաֆ հասըլ օլմասընըն հալմատիսի հէր թարաֆտա մէսէրլէթ հասըլ իթմիշ օլտըզընը թէլէկրաֆ պիւտիւրիլիօր:

Մալիւմ օլտըզը իւզըքէ, սօն տէֆա Մ. Բուզվէլթին Միքաթօյա իթտիկի միւրաճաթ իւզէրինէ, Թօքիօտա ֆէվզէլատէ պիր վիւքէլա վէ Բէճալ մէճիսի թէճէմմիւ իտուպ, սէպէպի միւնազաա օլան չարթլարը խաֆիֆլէթմիշ իտիլէր: Իշթէ պու մէճիսին գարարը սուլըն միւմքին իտէպիլմիշ տիր:

—Սուլհ հալմատիսի իւզէրինէ, Ամերիկա, Պէրլին, Բարիզ վէ Լօնտօն պանդալարը Բուսիայա վէ ճաթօնա էտիւնճ բարա վէրմէք իշիւն հիւսնիւ ըրիզա կէօթէրմէկէ պաշլամըշլար տըր:

ՍՈՒԼՀԸ ՌԻՄՈՒՄԻ ԳՕՆՖԷՐԱՆՈԸ

Սօն պիր թէլէկրաֆա պինտէն, սուլըն ումուլի իշիւն Լահէտէ իքիլնէ պիր գօնֆէրանա թէճէմմիւ իթմէք խուսուսընտա Մ. Բուզվէլթ եագընտա պիւլթիւն տէվլէթլէրէ տալթէնա՝ մէլէր կէօնտէրճէք իմիշ: Մալիւմ օլտըզը իւզըքէ, չէնթ ալլար մուգատտէմ Մ. Բուզվէլթ տէվլէթլէրէ այնը թէքլիքի իթմիշ իտի վէ եալընըզ Բուսիա՝ մուհարէպէ խիթամընտան սօնրայա պըրագըլմասընը թէքլիքի իթմիշ իտի: Իշթէ վագթը կէլմիշ օլտու: Բէվայթէ կէօրէ գօնֆէրանտա Շարգ մէսէլէսիտալի մասա իւզէրինէ գօյաճագլար:

ՖԻԱՆՍԱՎԷ ՄԱՐՈՔ

Մարոք Սուլթանը վէ Թրանսա տէվլէթի պէյնիտէ պիր վագըլթտան պէրու հուսուլա կէլմիշ օլան իսթիլաֆաթ սօն կիւնլէրտէ տահա քէսկին պիր հալ քէսպ իթմիշ տիր: Թրանսանըն պաղը թէքլիֆաթըն Սուլթան տօլալըտան բէտտ իթմէք իւզըքէ Ալմանիայա իթիճա իթմիշ իտի: Պու տէֆա պիր ֆրանսըզ թապասը միւսլիմանըն Մարոքտա հապս օլընմըշ օլմասը Թրանսայը թէքրար հիտտէթլէնտիրտի: Սուլթան մէզքիւր մահպուսը Թըրանսայա թէսլիմ իթմէք իսթէթէմիյօր: պու պապտէ ֆրանսըզ էլիսինի միւրաճաթլարը սէմէրէսիլ գալմըշ տըր:

Թուլօնտան պիւտիւրիլիօր իւզըքէ պիր տօնանմա Մարօք

սուլարընա կէօնտէրմէք իշիւն հաղըրըզ կէօրիլիյօր: Սուլթան իթաաթա մէճպուր օլաճագ տըր: Ֆէստէքի ֆրանսըզ էլիսի Սուլթանա պիր իւլթիմաթօմ վէրուպ իւշ կիւնտէն մէզքիւր մահպուլ սէրպէսթ պըրագըլմաղ իսէ՝ քէնտիլի Մարօքը թէրք իտէճէկինի պիւտիւրմիշ:

ՄԻԻԹԷՆԷՎԻԷ

Աճէմ Շահը Բեթերապուրկա եէթիշմիշ տիր:

—Պինլէրճէ Բուս քէօյլիլէրի աճըլըտան աճիլ գալուպ, Բեթերապուրկա վէ Մօսկուայա տօլմուշլար տըր: քէօյլիլէրին պու հարէքէթի իսթիլալա սուհուլէթ վէրէճէք տիր:

Ի Խ Թ Ա Ր

Էլան կաղէթա պէտէլիի էտէմէմիշ լօան ապօնէլէրիմիզ սէնէնիս սէքիզինճի այնտա պուլընաղըմըզ վէ հէր պիր մէսարիֆիմիզ բէշին օլտըզըն նագարա ալարագ իյֆար տէյն իթմէլէրի բէճա օլուսուր:

ՐՕՄԱԹԻԶՄԻ ԴԵՂ

Ոտքի, սրունքի, մէջքի, եւ վերջապէս մարմնոյ որ եւ իրէ մասին մէջ յօդացաւ: քամի [եէլ րօմաթիլիմ] ունեցողներ պէտք է գործածեն մեր քով գտնուած վանայ Մամնը (Նախըն) որուն օգտակարութիւնը կ'երախտաւորենք եւ արգէն հաղարաւորներու կողմէ փորձուած է:

Եախին կրակին վրայ տաքցնելով փաղցնելու է ցաւած աեղը: Յաւը անհետանալէն վերջ եախին ինքնիւրէն կը փրթի տապից մարմնոյ վրայ վերք կամ հոտը թողնելու: Մէկ եախին կարելի է գործածել 3-4 տարի: Հատը կարծէ 2 20 ֆր. եւ 3. 20 փոսթի ծախքով միասեղ: Դիմել Յ. Կ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆԻ Վառնա

ԸՆՏԻՐ ՔԱՅԱԼԻ

Ջուտ խաղողէ պատրաստուած բնական քաղախի նորահաստա մեր մըթերանցը առիթ կընծայէ յարգոյ հասարակութեան որ ասկէ յետոյ զերծ մնայ խաղախեալ եւ ուշեւայլ զեղերով պատրաստուած կեղծ քաղախներու վնասներէն: Մեր քաղախին անարատութիւնը եւ ազդեցութիւնը ամէն երաշխիք կ'ընծայէ իր առողջութեան նախանձախնդիր յաճախորդին, որ՝ անգամ մը փորձելով արգէն հաստաած պիտի ըլլայ գիրազանցութիւնը:

Դուրսէն մեծաքանակ յանձնարարութիւնք փութով կը գործադրուին ի հարկին նմոյշ ալ ղրկելով:

Հասցէ՝

ԱՐՄԵՆԱԿ ԳԱՍՍԱԳԵԱՆ

Դ. Թաղ

Փողոց Գօլօնի թիւ 65 ՎԱՌԱ

Одговорились А. Курбетиянъ
печ. А. П. Д. Тодоровъ и С. Ко.—Варна